

բնական հպարտութիւնը՝ զորս դիտութիւնը չի կարող մեռցնել առանց աւետարանի գերապանծ սիրոյն։ Այս կարծիքն ունին սահմանադրական կառավարութեան վրայ եւրոպական մոքի առենահեղինակաւոր ներկայացուցիչներից շատերը։

Վեհափառ Հայրեկը իւր գրչի վերջին վաստակը նուիրել է իւր սիրելի ժողովրդի արևատեսական կեանքի բարուգման, առանց որի բոլոր բարոյագիտական և ազգային Հայրենադիտական զրուածքներն ու քարոզները իրական արդիւնք չեն կարող ունենալ։ Պապիկ և Թոռոնիկ գրուածքը պարունակում է փորձառական, անտեսադիտական խրանների մի ամբողջ շաբը։

Հայրեկի բոլոր գրուածքների մէջ փայլում են Նրա տաղանդի զանտրան յատկանիշները՝ մարդկային բնաւորութիւնները և ընկերական յարաբերութիւնները դիտելու զարմանալի շնորհը առողջ, նախապաշտութիւններից և աւանդական կաշկանդութիւններից աղատ, ինքնուրոյն խելք, լայն աշխարհայեացք, հակումն փիլիտօփայական խորհրդածութիւնների, բարձմաններու հանգամանքների մէջ ճշմարիսն, արգարն ու օգտակարը որոշելու սրաաես աչք, թշուատին ցաւակցելու զգայուն սիրակ բանաստեղծական քանքար։ Երբեք բանաստեղծ Նա քնարերգու է, ախուր մեղեդիներ ու ողբեր է երգում Նրա քնարը, մեղեդիների ու ողբերի ձայն է, լուռում Նրա բոլոր գրուածքների մէջ՝ լինի պատմողական, նկարագրական, բարոյագիտական խորհրդածութիւն թէ կրօնական քարոյ։ Եւ այդ բոլորի խկական ներշնչողը Նրա անսահման հաւատըն է, որ և հաւատ է զարթեցնում ընթերցողների մէջ գործել ի բարին, ոգևորուած այն զաղափարով, որ ճշմարիս գործը, եթէ մի մանանեիր հատի չափ անգամ լինի՝ կամ և մէծ ծառ կդառնայ, շատ վաստակեալների պատսպարելով իւր հովանու ներքոյ։

Մ. 2.

ԴԻՑՈՂՈՒԹԻՒՆԵՐ ԽՈՐԵՆԱՑՈՒՄ ՄԱՍԻՆ.

Ա. Հին Հայոց տիպարն ու մաշակն ըստ Խորենացու։

Յայտնի է, որ մարդաբանութեան համար մեծ կարևորութիւն ունին բացի գանգի շափերից՝ մարդու կաշուի, աշքերի և մազերի գոյնը, մարդու հասակը և նոյն խակ մազերի ձեւն ու նրանց յատկութիւնը։ Այս վերջին նշանների համաձայն է կատարել Հեկելը մարդկային ցեղերի բաժանումն իր հռչակաւոր զբքի մէջ, այն ինչ, մի այլ յայանի գիտնական, Վիրխովը, նոյնն ուղղում է անել մարդկանց աշքերի և մազի գոյների համեմատ։

Այս տեսակետով վերին աստիճանի հարցասիրական, թէ է հատուկաոր, տեղեկութիւններ կան Խորենացու մէջ մեր պատմութեան մի քանի հերոսների մասին։ Այսպէս՝ Հայկի մասին ասւում է, որ կապոյտ աշուի, սատիկ զոռզ մազերով (քաջագանգուր), յաղթանդամ և բարեկազմ՝ մի մարդ էր։

Հրաշեան պայծառ երես (սպիտակ) և հրափայլ աշքեր ուներ, Ցիգրանը չէկ էր, մսզերի ծայրը զուուզ, կարմիր երեսով և մնդուանման աշքերով, նա ամբողջովին մի բարեկազմ և զեղեցիկ տղամարդ էր և նրա մասին մեզ հասած նկարագիրը սկսած «մազերի ծայրից «մինչե» գեղեցիկ ստեղերը—հասնում է լուսանկարչի կատարելութեան։ Վահագնը իւր հօր նման չէկ էր, <sup>2</sup> մազերը կրակի պէս վառվառն, մօրուքը բոցազոյն, իսկ աշուին արեկի նման (հրացայտ)։ Ցուհաց մանկան մակդիրը, Վարդ-գէս-վարդագոյն մազունեցող բռնել է նրա յատուկ անուան տեղը, որ տարօրինակ բան չէ վէպի կամ առասպեկտի մէջ։ Սա մեզ յիշեցնում է ներկայիս ժողովրդական սուրբը, Վարդեհեր, որի խկական անունն անծանօթ է ինչպէս ինձ, այնպէս էլ ժողովրդին, քանի որ մակդիրը լիովին բռնել է յատուկ անուան տեղը, ինչպէս որ նոյնն էլ պատահել է Հրաշեայ անուան հետ։

<sup>1</sup> Haeckel. Natürliche Schöpfungsgechichte,

<sup>2</sup> մաշեաշ».

Այս ամեն՝ մակդիրներն ու ածականները,  
որ մի զարմանալի հետեւականութեամբ կըս-  
կընուում են մեր պատմութեան հոգոյն շրը-  
ջանի հերոսների մասին, մտացածին և լո-  
րենացու երեւակայութեան արզիւնք չենք կա-  
րող համարել, որքան էլ կասկածով նայենք  
նրա տուած տեղեկութիւններին—Ոչ էլ մի  
պատահական զուգադիպութիւն կարող է լի-  
նել այս ամենը, Ընդհակառակը մեծ խելք  
և հմտութիւն հարկաւոր չէ նկատելու հա-  
մար, որ այդ հերոսների մէջ մի օրդանական  
կապ, մի բնական յաջորդականութիւն կայ,  
մի տիպային ամրողջութիւն, որի մէջ երեւան  
են գալիս մի որոշ և կազմակերպուած ցեղի  
տոհմական յատկանիշներն իրեւ հաստա-  
տուն տիպ.—Ժառանգականութեան օրէնքն  
այստեղ պահուած է զարմանալի հետեւակա-  
նութեամբ, և բնագէտի հայեացքով այդ տի-  
պերն անհրաժեշտօրէն մի և նոյն ցեղի հա-  
րազաներն են:

Զարմանալին ու տարօրինակն այն է, որ  
այդ հերոսներն իրանց արտաքինով յիշեցնում  
են Նիբելունգների զիւցազուններին, նրանց  
ոսկէփայլ ու գռուզ մազերը, կապոյտ աշուին,  
անձնեայ հասակը . . . . Մի խօսքով, Հայիի,  
Տիգրանի, կամ Վահագնի տիպը զբեթէ նոյ  
նանում է գերմանական Վոթանի ու նրա սե-  
րընդի հետ. Այնպէս որ, եթէ այս յատկանիշ-  
ներով որոշել կամենանք մեր զիւցազունների  
մարդարանական տիպը անպայման նրանց  
պիտի համարենք մի հիւսիսային շէկ ու զան-  
գրաներ ազգի սերունդ:

Ծառ լւաւ կառարկէ մեղ ընթերցողը,  
եթէ ընդունենք անգամ, որ Խորենացին օգ-  
տուելէ ազգային վէպից, որ Հայկ Տիգրան  
ու Վահագն այդ վէպի հերոսներն են, դա  
մեղ իրաւոնք չի տայ մարդարանական հե-  
տեւութիւնների, քանի որ դրանք իրական  
անհատներ չեն, այլ երեսկայական հերոս-  
ներ, ու ժողովրդի բանաստեղծական աւիւնի  
արդիւնք: Իսկ այդպիսի ցնորդից զիտական  
եզրակացութիւններ հանելը ներելի չէ ոչ մի  
լուրջ զլիի: Այս դէպքում սակայն, անգնա-  
հատելի նշանակութիւն է ստանում խնդրի  
հոգեբանական կողմը և մեր եզրակացութիւնը  
ոչ միայն չի հերքում, այլ ամրապնդում

Ե մի նոր և չիմնաւոր նեցուկագի:

Յայտնի է, որ ամեն մի ժողովուրդ իդէալ  
լացնում, ապառածացնում է ինքն իրան.  
Նրա հերոսներն ու զիւցազունները ժողովրդա-  
կան ազգային յատկանիշների մարմացում են  
զերազանց կատարելութեամբ Ռւսաֆի, երբ  
մենք մի զիւցազի կամ հերոսի նկարագիրն  
ենք կարդում այդ հերոսի վրայ անմիջապէս  
զիտում ենք սաեղծող ժողովրդի յատկա-  
նիշները - Եվդի հերոսները չեկ են, Խոպա-  
նացունը թուխ, Նեղրինը-սեւ սա մի պարզ  
չոգերանական օրէնք է:

Այս երեսին այնքան խոր և արմատական է, որ ամեն մի ժողովուրդ վերստեղծում և իրան է նմանեցնում նոյն իսկ այնպիսի անձնաւորութիւններ, որոնք ոչ մի ցեղական առնչութիւն չունեն նրա հետ. ուուսն ու զերմանացին Քրիստոսին և նրա աշակերտներին շեկ են երեսակայում, և այդպէս էլ նըկարում են, հակառակ պատմական իրողութեան, իսկ յսյն ու իսպանացին նոյնը նկարում են թուխ՝ ոչ թէ պատմական հաշիւներով, այլ որովհետեւ իրանք էլ թուխ են կարծ մի ազգի գաղափարը մարդկային գեղեցկութեան իդէալականի ինչպէս և ազեղի մասին, փոփոխական է տեղի, կիմայի, ժաշավայրի և ժողովրդի ցեղական յատկանիշների համաձայն. Ուստի, երբ մի ազգ իւր հերոսներին հետեօրէն տալիս է որոշ Փիզիքական կամ բարոյական յատկութիւններ, դա իր սեփական հոգու կամ մարմնի յատկութիւններն են, որ բանաստեղծօրէն արտացոլում են նրա հերոսների մեջ. Այնպիս որ շէկը, զուոզու խաժակը, ոչ թէ Հայկ, Տիգրան ու Վահագն են, որոնք գուցէ երրեք զյուրթիւն էլ շեն ունեցել այլ նրանց ստեղծող ժողովուրդը, որ իւր ունեցածն ու իր սիրածը խացրել բիւրեղացրել և ամփոփել է, իր հերոսների մեջ, անմահացնելով հենց ինքն իրան....

Եթէ այս ամէնի վրայ նայենք արուեստի  
ու ծաշակի կողմից, զա մեր առաջ բաց է  
անում գարձեալ մի հիւսիսային սիրու և հիւ-  
սիրային երեակայութիւն իր բնորոշ գծե-  
րով, քանի որ ոսկեփայլ ու գանգուր մազեր,  
կապօյտ կամ մեղուանման աչուի, միայն հիւ-

սիսի զաւակն է երեւակայում։ Այնպէս որ վիզիթական այս յատկանիշների մեջ անմահացած են ոչ միայն ստեղծող ժողովրդի ափաբան ու կազմուածքը, այլ և նրա ձաշակն ու իգեալը գեղեցկի մասին, որ մի հիւսիսային ազգի իղէալ է։

Այս ամէնը կարող էր դուցէ շատերին  
կասկածելի ու ձգձգուած երեալ քանի որ  
մենք հարաւի զաւակ ենք և հարաւային ափա-  
ու ճաշակ ունինք այսօր։ կարելի էր մինչեւ  
անգամ կարծել որ դա մի կեղծիք է, որ դա  
մի հայի ստեղծագործութիւն չէ, եթէ դրա  
համար այլ բոլորովին կողմնակի վկայութիւն  
չունենայինք։

Գանգուր կամ ալիքաւոր մազերն ինչպէս երեսում է, այնքան սովորական ու սիրելի են եղել Հին Հայերի մէջ և իրանց գըրշմն այնքան խոր է եղել նրանց մտապատճերների վրայ, որ գա արձանացել է մեր լեզուի մէջ և հասել է մինչև մեր օրերը և մենք զեռ այսօր էլ ծերունի ասելու փոխանակ, գործ ենք ածում ալենոր, որի իսկական իմաստն է ալէճն (գանգուր) մազ ունեցող։ Որ սա մի բռնապրօս կարկատան չէ, վկայ Խորենացին, որ նոյն բառն իր բռն և նախնական իմաստին համեմատ տալիս է Տիգրանի մազերին՝ «աղէթեկ» (ալէթեկ) ծայրիւ հերաց—մազերի ծայրը ալիքին նման բեկուն։ Այդ վկայութիւնն էլ աւելի ծանրակշիռ է նրանով որ նրա մէջ պահուած է այդ բառի հնագոյն ձեւն իրուե հնագոյն ժամանակի արդիւնք։

Այսքանը գեռ բաւական չէ. մազերի  
ալիք յատկութիւնն այնքան սիրելի և գու-  
րեկան է եղել հայերին որ մեզանից շատերը  
դեռ այսօր էլ գեղեցիկ կամ սիրուն ասելու  
փոխանակ գործ են ածում աղեւոր (աղե-  
ւոր) «աղւոր»։ Ինչ որ ալիքաւոր կամ ա-  
յիձեւ էր նաև ուրբամ և գեղեցիկ էր:

Սա մի այնպիսի վկայութիւն է, այնքան ակներեւ ու անկախ, որ ոչ մի կասկածի ժողովում, թէ այս լեզուն խօսողն անպայման այնպիսի տիպեր ու հերոսներ պիտի ունենար, ինչպէս մեզ հաղորդում է Խորենացին. և այն, ինչ որ այս ժողովուրդը սիրել ու պահել է լեզուի մէջ, նոյնն էլ նա երգել ու գովել և իւր վէսպերում:

Սոտիւների նոյնութիւնն ու ներդաշնակութիւնը մեր լեզուի և լիբական անձնը մէջ մի բացարութիւն կարող է վերցնել որ զբանք երկուսն էլ մի և նոյն հոգու, մի և նոյն երեակայութեան ծնունդ են, ուսափ և Խորինացու նկարագրածը վեր է ամէն կասկածից, և Գարագաշեանը՝ որ չէ կամեցիլ քար քարի վրայ թողնել Խորինացու մէջ, ստիպուած է եղել խոստովանելու, որ Տիգրանի նկարագրին անհասկանալի կլինի եթէ մնեք շրնգունենք, որ դա մի ժամանակակից է զբել—Մեզ համար դա զուրկ է կարեորութիւնից. ընդհակառակն այդտեղ աւելի մի նրաճաշակ և երեակայող ժողովրդի ֆանտազիան է երեւում քան մի ժամանակակից պատմագրի գիտողութիւնը. — մի հոմերական ֆանտազիա, որ չի բաւականանում նկարագրելու Տիգրանի մազիրը, երեսը աշուին հասակը, թիկունքը, բարձերը, այլ և

1 Այս ամենը բաց կ անում մեր տուած մի գործութանձն և ինդազ մասերի գոյնի մասնաւանց մեր մասին պազային ողու մի հիմք է և ան ին ակտն շրջան է, երբ առաջին պարզ նմանութիւնն ըիշւրդանում է քանիասիդական մնամաժօրների մէջ, ինչպիսին է Վարդ-զկս, Հրայր, Յուլակ և այլն . . . և կամ մանկական պարզութեամբ նոյնացնում է աղջի, աղիս և աղիուր, դրանից առաջ վերացական գաղափարներ հանելով գեղեցիկ ու լադի մասին:

Այդ հնուրեան յայսի ապացոյ են բացի յիշեալ-  
մերից Վահագն ու Տիգրան անունները: Առաջինը բարու-  
ղմա ին յիշում Թիստոնկորինից յետոյ, որովհետեւ վա-  
զուց արդյունք ենի ու առնել ժողովրդական ու քերեւ Վա-  
հագն ձևի առաջ: իսկ երկրորդն, որ վարչին անձան պա-  
տահում է միայն Ա. Դարում Թիստոնից յետոյ, ոյնտ-  
եղեւ նոյնպէս ենի ի տալիս գործածական Տիգրան ձևի  
առաջ: Եթ երեսորդին միայն վիստական հասուածներն  
են, որ իրանց լավական կազմութեան շնորհիւ անցաւա-  
պահուաննեւ են այդ անունները: —Հասկանացի է, որ մօ-  
պատ է բուռմ պրօք. Հիւրցմանի կարծիքը, ոք «Statt Tigran,  
man bei so einem alten Namen Tigran erwarten  
sollte, wenn der Name in lebendigem Gebrauche geblie-  
ben wäre», ինչպէս ու ամերկութելի է եւ առա ենթա-  
դրութիւնը Տրդա: Տիգրան անունների մասին, որ ոք հա-  
յերկն առ-բառից է ուզում ծագած ենանէ և ոք պար-  
իւրեան կ հանում, առանց իր սովորական ապացոյները  
բարելու (Arm. Gramm. 1. Theil): Հուակաւոր հայագե-  
քը մասացած է երեսում, որ մար լեզում Դրդուրը դա-  
սում է Գիրնու-Գիրան, չ' զիսեւ-ք=չ' իսեւ, չ' իսիւ, ուստի  
և Տիգրանի մեջ աւելի հաւանականորիւն կոր գծան  
բաղաձայնի, յան ի. քերեւ ձայնաւորի կորստան:

կարեոր է համարում յիշել նաև նրա «զեղեցիկ ոտները»՝ այնուհետեւ անցնում է նրա ներքին յատկութիւններին. կերակուրների և ըմպելիքի մէջ պարկեշաւ ուրախութիւնների մէջ օրինաւոր, «որի մասին մեր նախնիք բամբիռով երգում եւ պատմում էին որ մարմական ցանկութիւնների մէջ չափաւոր էր առ և մեծիմասաւ ու պերճարան այն ամենի մէջ; ինչ որ մարդկութեանը պիտանի էր . . . և ի՞նչ կայ ինձ համար աւելի սիրելի բան քան թէ շարունակել այս դրբի մէջ, ասում է Խորենացին, այն զովեստներն ու պատմութիւնները, որ կային սրա (Տիգրանի) մասին . . . արդարագառ ու հաւասարասէր, կշիռ ունենալով ամեն բանի մէջ; . . . որ ոչ լաւագունին էր նախանձում ոչ էլ նուռատին արհամարհում, այլ ամենքի վրայ հաւասարապէս տարածում էր իր ինամբի զգեստը...

Եթե մի անհատ Տիգրանը շատ չնշին ու փոքր կերեար իմ աչքին, այս հիանալի նկարագիրն անպայման վիպական է. և Տիգրանը մի ամերող տիպէ, որի մէջ բիւրեղացել են հայ ժողովրդի իդձերն ու ցանկութիւնները, ձաշակն ու արուեստը. առ մի իդէալ է սիրեցեալ իշխանի մասին, որ անհունապէս զնդեցիկ է մարմնով, «չափաւոր և օրինաւոր» իր վայելքների մէջ և մի անզուգտին իշխող, ամենքին հաւասար աչքով նայող, ամենքին խնամող, հայրենիքի փառքը բարձրացնող թշնամիների աչքը հանող . . .

Խորենացին իր հակայտիան տաղմանդով ըմբռնել ու տեսել է այն, ինչ որ մեղանից շատերն հիմա դժուարութեամբ են տեսնում և նա պարզ ու բացորոշ ասում է, որ Տիգրանի նկարուգիրը վեր է առել. «բամբիռի նուագածութեամբ երգող ժողովրդի ունելից ու պատմութիւններից»: Մի քանի դոր շարունակ երգուած ու պատմուած զովեստներն հարկաւ մինչեւ Խորենացու ժամանակը չեն կարող նախնական ծշտութիւնն ունենալ. բայց որ ընդհակառակը նրանք վիպական զրոշմ պիտի սահմանացին, որ ժողովուրդը իւր մարմնն ու հոգին, իւր իդձերն ու ձաշակը պիտի զնէր այդ զովեստների մէջ, այդ անտարակուսելի է. Եւ իրաւ Տիգրանի մէջ մենք անմահացած ենք տեսնում մի զարմա-

նալի լրութեամբ հայ մարդու հայեացքը ընտիր ու գեղեցիկ իշխանի և կարգին ու օրինաւոր մարդու մասին. Դա մի հոմերական տիպար է:

Եթէ անհերթելի փառաերով ապացուցուի անգամ, որ այդ հելուսները վիպաւմուգովրական չեն, այլ հաւրովի, արդիւնք մի Խորենացու կամ Մարտրասի երևակայութեան, ինչ զիրաբերում է ֆիզիքական յատկանիշներին, դա էլի մասւմ է մի հիւսիսային մարդու սաեղծագործութիւն, մի գործ, որ լիուլի կրում է հիւսիսային զրոշմ: Մի ասորի Մարտրաս՝ ուրեմն հարաւի և սեմիտի զաւակի այդպիսի երեակայութիւն չեր կարող ունենալ դա մի հոգերանական անկարելութիւն է: Ով էլ լինի այդ կեղծող տաղանդն, ակներե է, որ նա մի շիկաներ է կապոյտ աշուի ժողովրդի զաւակ է, որովհետեւ, աս նոյնպէս մի հոգերանական օրենք է: ամեն մի տաղանդի ճաշակն ու իդէալը հիմնագծերով նոյնն է, ինչ որ իր ազգինը. քանի որ մինը միւսի ցողապատկերն է: Ռւստի եթէ այս բաներն հսարող մի հայ լինի, օրինակ մի Խորենացի, դա այնու ամենայնի կմայ մի անգնահատելի զոկումնատամանակաց հայ տիպարի ու ճաշակի . . .

Այսպէս թէ այնպէս վերոյիշեալ հերոսները կարող են լինել կամ պատմական անձեր կամ ժողովրդի սաեղծած դիւցազուններ և կամ մի որ և է անձի երեակայութեան ծնունդ ու կեղծիք. ամենից հաւանական այն է, որ զրանք պատմագիտական հերոսներ են: Մակայն, այս երեք դէպքումն էլ, հոգերանօրէն անկարելու և ճիշտ կետն այն է, որ զրանք հիւսիսային տիպանդներ են, ուրեմն մի հիւսիսային ազգի պատկանեալ:

Բայց այն ժամանակ մեր վէպը ողբալի կերպով հակասում է ինքն իրան, քանի որ նրա հելուսները հակառակ իրանց Փիզիքական կազմուածքին, զուրս են բերուած հարաւից:

Մեր վէպի մէջ նշոյն անգամ չկայ, թէ հայերը հիւսիսից լինին եկած, կամ մի հիւսիսային ծագումն ունենային, այն ինչ, Խո-

րենացին պարզ ասուի է, որ Հայկը թարեւլոնցի էր և թէլին ընկերակից։ Այս, ինչպէս և յետոյ ցցց կտանք ուրիշները՝ ապացոյց են, որ մեր վէպը եղծուած ու դիտաւորեալ փոփոխութիւնների է ենթարկուած։ Ո՞րն է հիմայ կեղծն այս երկուսից, կամ Հայկի տիպը և կամ նրա բարելոնցի լինելը։ Տիպը կեղծելու ոչ կարիք կար ոչ հաշիւ։ Բայց նոյն անձը թարելոնց հանելու, սեմիտացնելու, մեր վէպի հերոսն Աստուածաշունչի պատմածին հետ կապելու ոչ միայն կարիք այլ և անհրաժեշտ պահանջ կար, քրիստոնեայ հայերի զգացումները ցոյելու նրանց ծագումը Ս. զրքի հեղինակաւոր վկայութեամբ հաստատելու և ազգային հին ու կասկածելի աւանդութիւնը սրբագրելու համար։

Ահա թէ որն է կեղծիքը։ տիպերն հին են և անտրատ միայն նրանց գործողութեան ու ծագման հանգամանքներն են եղծած ի համայս կրօնական մօտիւների, և արգիւնքն այն է եղել որ մի զուտարիւն գերմանական տիպ զուրս է եկել սեմիտի դերում, առանց սակայն այս վերջինի ֆիզիքական յատկանիշները գել կեղծումներով իր վրայ առանելու... Եղծելով Հայկի մասին եղած աւանդութիւնը, կարիք կար նաև կեղծելու նրա սերնդեան ծագումը, թագրատունիք Հայկի սերունդ էին համարուամ (Խոր. Ա. Իթ.). Խորենացին կարեսը է համարուամ հերքել այդ աւանդութիւնը՝ «յիմար և անոնք, անուանելով եղածը որովհետեւ ինքը մտադիր էր նոյնը յետոյ «ոճով»—պատմելու . . . ոմ, որ ստեղծուած էր Ս. զրքի պատմածները ինկարկելու և ազգայինը սեմիտայնելու ցանկութեամբ . . . թագրատունիների հետ մեծ իշխանական առջմերից որին չի գուրզուրել սեմիտանալու տենչանքը. Ամստունիներին յիշենք արդեօք, թէ Արծրունիներին։

Մենակ Հայ վէպը եղծողն ու Հայ իշխանները չեն որ աշխատուամ են սեմիտանալ։ Այդ ամէնը կատարուած է զիտակական հա-

<sup>1</sup> Պատահի, ինչպէս երևում է, այնտան նեռու և՛ զնացել այդ ասկարիզում, որ թագրատունիներին համել են ցանկացել ուղղակի Դաւիթի սերմոցի . . .

շիւներով։ Տարօրինակն այն է, որ մենք ինքներս, ներկայում, առանց այդպիսի նապատակների ու զրդումների սեմիտացնուամ ենք մեր հերոսներին, հակառակ մեզ հասած պատմական աեղեկութիւններին։ «Խարտեաշ և զանգրահայեր» Հայկը, մեր տներում սովորական գարձածած պատկերների մէջ, երևան է զալիս որպէս մի սեմիտ, այդ ցեղին յատուկ ահապին քթով. . . Եթէ Խորենացին յարութիւն առնէր, անատարակոյս պիտի զարմանար Հայկի տեղ մի Արրահամի թռռ տեսնելով։ Այդ դեռ բաւական չէ. մենք եղծելու սեմիտացը ենք միայն Հայկի նման տուապելական, այլ և բուն պատմական անհատներ։ Հակառակ մեզ հասած ստոյդ ցեղարանութեան։ Աւարայրի հերոսը, յայտնի է, որ մօր կողմց պարթե էր, իսկ հօր կողմից, եթէ հաւատանք Խորենացուն, շինացի, — ուրեմն մի մօնքով արիական խառնուրդ. բայց և այնպէս, նրա պատկերն էր, այսօր նկարուած է սեմիտի քթով։ Մենք այսօր այդ սապարիզում այնքան հեռու ենք գնացել որ սեմիտ կերպարանքի այդ բնորոշ տարրը ծանաչում ենք «Հայկական քթիթ», անունով, այն ինչ մենք սրբական ժողովուր, ենք համարուեմ։

Ինչպէս ամեն բան, հարկաւ, սա էլ ունի իր խորին պատմառները, որոնք ծնունդ են մարդա հոգեբանական հիմունքների . . . Առաջիկայում պիտի ջանանք, մեր ուժերը ներածին չափ, բացարեկ այս ամենը . . .

Դր. Վանցեան



### ՔՆՈՒԹԻՒՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՐԻ

(Եարունակութիւն) \*

Ո Կ Օ

Ե և և ձայնեցուն նման՝ գրաբարի ո և օ նաշիւններն ալ Ենթակայ եղած լինելով գրեթէ